

ներ, երկու՝ իրարմէ բոլորովին տարբերող — հին ու նոր — աշխարհներ։ Աւելի լաւ է բառեր շփոթել, քան քաղաքական մեծ կազմակերպութիւններ, պատմական ժաւանակաշարներ։ Որքան լրջութիւն և որքան գիտակցութիւն կը պակսի հոփառարի — հրապուրիչ, երազել տուող բառ, — այժմեան գործածութեան մէջ։ Իսկ վարչապետ, գրեթէ ինքնակայի համագոր, արդիւնք է արեւելեան երեւակայութեան, և անհամեմատական՝ արդի քաղաքական կազմակերպութեանց։ Այսպէս ուրեմն՝ Ազրութեան դէմ կը զօրէ միայն Դատարկութիւնը, «պայմանադրական համաձայնութիւն»ը, որ սակայն գորդներու կամքէն կախում ունի։

Այն վայրկեանն՝ ուր հայ պարբերաթերթերը բարոյական ոյժն ունենան անոյշ վարժութեան հրաժարելու, և թօթափելու զայն իրենց մտքէն, խնդիրը լուծուած կ'ըլլայ տրամաբանական ճարտով։ Իսկ եթէ տեւեն անփոփոխ՝ ներկայ պարագայը, ի հարկէ, Բզրութեան կը մնայ յաղթանակը, որովհետեւ «պայմանադրական համաձայնութիւնը» գերագոր է քան ուրիշ ո՛ր և է պատճառ։ Վասն զի ի՞նչ է լեզուն ինքնին. պոյմանադրութիւն մը՝ ձայներու մասին։

ՀԱՅՐԱԿԱՆ

ՄԱՏԻՎ ԵՂԵՐ

Միջին դարու երգիչներու տաղերը հրատարակել, ի սկզբանէ անտի սովորութիւն եղաւ, և երթալով ճարակեցաւ քիչ մը ամէն թերթերու մէջ։ Բայց այս ոտանաւոր գրութեանքու քով, արձակ գրութեանքու ալ կ'ան, կ'ենսալիք ուրիշ շունչով մը՝ քան ինչ որ վարժուած ենք տեսնել մեր մատենագրութեան հնագոյն շրջանին մէջ։ Ընդհանուր անուան մը տակ գատնեք ալ ամփոփելու համար, կոչենք՝ Միջին դարու հայրապետ, քանի որ ընդհանրապէս կարծ գրութիւններ են, ընտանեկան խօսակցութեամբ ու կենսաքով լեցուն։

Հերկայ գոր կը հրատարակենք՝ շատ նըբաւ միտ ու չարամեծի կտոր մըն է։ Գրիչը իր բոլոր զգացումներն ու տարակոյսները ճարտարութեամբ Գրիստոսի բերան դրած է։ Պզտի խօսակցութիւն մըն է չարամիտ ու զուարթ շնչտով մը։

Գծախտութիւնը այս է որ ինչպէս բոլոր այս կարգի գրութեանք, ասոր ալ հեղինակն անձնաթէ է։ Հանուած է ճառերտը մը գոր՝ չորեք տասներորդ դարու կէսերուն, գրած է Դիւրիտոն ան աքեղայ Երուսաղէմի մէջ որ ըստ իս խօսակցութեան հեղինակն ըլլալու է։ Այս կտորին լեզուն իսկ յայտնի կը տեսնուի թէ մեծ հնուածիւն մը չունի. հանրածանոթ շարականներուն եղած ակնարկութիւններն ալ կը ցուցնեն որ Դնոր հայիկէն վերջ է։ Բառերուն մէջ յիշեցր ստապար, (հաշմ ոտիւք) մուրիկի (աղթաւ) այլազգի բառերը՝ որոնք ստորին դարերու ռամբորէնի մէջ միայն սկսած են գործածուիլ։ Ասոր գրողը կարգացեր է նաեւ հոր կտակարանի անվաւերները։ Այսպէս անվաւերներէ առնուած տեղեկութիւններ են երբ Բիստոսի համար կը գրէ թէ «փախեալ ի Այգայտոս, և գիշուսն կոյտակուսելու» և երբ ատաքախներուն համար կը գրէ «որպէս և ցուցանէ պատմութիւն ուրիշ սաւաքիւրցն Գրիստոսի»։

Այս կտորին հեղինակը հերթէ Աբեղան կարծելով՝ որ ինքզինք կը կոչէ «յազէ շոթմեմնեց և կառնախաւսեմնեց» ուրիշ փաստ չունիմ բայց որովհետեւ մեր ունեցած հնագոյն ձեւագիրը՝ որ պարունակէ այս գրութեանքը, իր ընդօրինակած ճառերտիւրն է։ Այսին զատ՝ գրութեանքին ոգին Այս հերթէս Աբեղային անուամբ բան մը չունիք դեռ որ ասոր հետ բարդատենք. բայց այն քանի մը յիշատակարաններէն, գոր կ'ազուցանէ ի դէպ և յանդէպ իր ճառերտին մէջ, շատ իսկ դուրս կը ցատի իր հոգին, գոր Ալիշան (Սիսուան, էջ 319) սպրի և աղուշով կը գտնէ։ Սրիկան մը տալու համար յիշեցր որ տեղ մը ճառը կ'ընդհատէ զնելու համար յիշատակարանի մը՝ յորում ապագայից պիտի աւանդէ թէ նոյն վայրկեանին լուերը սրունքները կը խալկեն։ Այսուհանդերձ ստեղծ ալ գորովով կը յիշէ ու աղօթից կը յանձնէ իր հայրենիքը կրակաւ, ծռվային կիլիկիոյ ծաղկած գիւղաքաղաքներէն մէկը (տես Սիսուան, էջ 318-319 և 547) որ այն ատեն վտանգի մէջ ըլլալ կը թուի. իր իսկ աղուշովութեան պատճառը ուրիշ քանի մէջ չկրնար գտնել, բայց կրակաւ ծնած ըլլալուն մէջ։ Բոլոր կրակից սակաւախելոքի համարու կը վայելէին Միջին դարու մէջ։ Ինչն իսկ շատ տրամադրող դուրս ցատեցնուցած է այս հանգամանքը։ Յիշատակարանի մը մէջ յետ աղապելու թէ. «Ով եղբարք, յորժամ հանգիստիք սխալի՝ նա դուք ուղեցե՛ք սիրով, և մի՛ նայերելով, զի ուղուց կրակից է՝ հետեւեալը կը պատմէ»։ «Վարդապետ մի յորկեց զայնպիսին թէ՛ գնա՛ զուրեք գնէ՛. հա գնաց գնեց, ու կերաւ քականջն ու լազեզուն ու զըղուղն, ու երբ զգանքն առջեւն եղիր» հա (վարդապետն) հարցաւ թէ՛ ո՞ր է ականջը։ հա ասաց թէ՛ Ականջ չունէր, խուլ էր։ Ո՛ր է լեզուն — լեզու չունէր, լեզատ էր։ — Ո՛ր է ըղուղն — ի կրակայն էր արծեւ, ըղուղ չունէր»։ Բաւական է անգամ մը կարգալի ներկայ հրատարակութեամբ զգալու համար որ տոյն այս խառնուածքն է և զատկեալ արտադրողը։

Հերկայ հրատարակութեամբս կը յուսանք ոչ

միայն հաճոյքը տալ ընթերցողներուն նախնեաց մէ մեզի հասած ո՛ր և է պատառիկ տպագրուած տեսնելու, այլ նաեւ քանի մը նոր ու բարեկազմ բառեր, որոնց եւ առաջին անգամ հոս հանդիպեցայ, ինչպիսիք են զրոյցը կեր, ինքնափակ, շատալոյսիկ, Յետին բառս Պղնձի քաղաքին մէջ ալ կայ գործածուած և ուրիշներէն՝ բայց շատալոյսի՝ ձեռով միայն, շատալոյսը վաճառու կան, իսկ շատալոյսիկ (ճանապարհորդ) ձեռով առաջին անգամ հանդիպեցայ այս գրուածքին մէջ՝ զոր ուրիշ բառով անկարելի է քննադատել քան որով որ Ալիշան նկարագրած է հերսէս Աբդալան, աղու և աղուալ:

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

ՅԱՏՍՄ ԱՒՈՒՐ

ՅԵՇԱՍԱԿ Է ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻՆ ԶՈՐ

ԲՈՇԿԵԱՑ ՔՐԻՍՏՈՍ

Այր ոմն անդամալոյծ, աղքատ և անտէր, տկար և անօգնական, անոք և անկարեւոր, լուծեալ և խափանեալ յամենայն պիտանի անդամոցն, — զի աչօքն կոյր էր, և ձեռօքն թոյլ, ոտօքն սապղար և մարմնօքն խոցւոր, — և այնպէս անկեալ կայր ի փողոցի մի՝ ի քաղաքն Երուսաղէմ, վասն ողորմութեան զոր առնէին նմա մարդիկըն:

Եւ էր ի ժամանակ քրիստոնէութեան: Եւ իսաչելութեանն Քրիստոսի, թաղմանն և յարութեանն և համբարձմանն յերկինս, փառօք առ հայր, ուստի բնաւ ոչ էր մեկուսացեալ, էջ Քրիստոս մարդասիրութեամբ իւրով ի յերկիր, և որպէս մարդ՝ պատճառանօք ինչ իրաց՝ անցանէր ընդ այն փողոցն, յորում նստէր անդամալոյծն: Եւ եկեալ եկաց Քրիստոս մերձ անդամալուծին, ետ ողջոյն և ասաց. Ձի՛ նստեալ ես աստ:

Այն անդամալոյծն. Վասն ողորմութեան զի կադ եմ և կոյր, սապղար և անտէր: Այն Քրիստոս. Քանի՜ ժամանակ է որ աստ անկեալ դնիս:

Այն անդամալոյծն. Լը ամ է՝ որ աստ վարանեալ նստիմ:

Այն Յիսուս. Ի՛նչ ցաւ ունիս:

Այն անդամալոյծն. Այս եմ՝ զոր տե-

սանես, ամենայն ցաւօք ի լի, և կոճղ անկեալ ի գետնի:

Այն Յիսուս. Ի՛նչ ունիս որ և կարեւոր: Այն անդամալոյծն. Որ՝ զՔրիստոս ունիմ, և կարեւոր՝ զիմ խոցերս, ծնող՝ զիմ սովս և զկարօտութիւնս, և կեանք՝ զկուրութիւն աչացս:

Այն Յիսուս. Որ համբերէ ի սպառ՝ նա կեցցէ:

Անդամալոյծն ասէ. Մինչեւ յեր համբերեմ. առաւ նշաւակի արար զիս Քրիստոս ամենայն ազգաց:

Այն Յիսուս. Զոր սիրէ տէր՝ խրատէ: Անդամալոյծն ասէ. Թէ՛ զիս խրատեց Քրիստոս, այսոր արժանի եմ: Բայց զքեզ կամիմ հարցնել թէ՛ դու ո՞վ ես որ զայդ ամենայն հարցանես ընդ իս:

— Այն Յիսուս. Ես մարդ եմ իբրեւ զքեզ. հարց զոր և կամիս:

Այն անդամալոյծն. Փահանայ ես թէ վարդապետ:

Այն Յիսուս. Ոչ քահանայ եմ և ոչ վարդապետ:

Այն անդամալոյծն. Ապա ի՛նչ մարդ ես. հոտդ քահանայի կու գայ, և բառք վարդապետի:

Այն Յիսուս. Շատաշըջիկ մարդ եմ ճառաւարչորդ:

Այն անդամալոյծն. Այժմ ուստի՞ գաս:

Այն Յիսուս. Ի Հընդկաց աշխարհէն:

Այն անդամալոյծն. Ի դպրոցի կացեալ ես:

Այն Յիսուս. Սակաւ մի ուսեալ եմ և ջանամ այլ ուսանել: Զի կամք խիստ ունիմ, և փութամ թէ՛ պէտ լինի և հասանեմ ճշմարիտ ուսման:

Այն անդամալոյծն. Զե՛ս լսել վասն Աթանագինեայ բժշկին թէ՛ ո՛ր իցէ:

Այն Յիսուս. Ես աշակերտ եմ նմա. բայց արուեստ մի աւելի գիտեմ քան զնա:

Այն անդամալոյծն. Մանուկ ես, և ըստ մանկութեան խօսիս: Զիմօրդ կարէ աշակերտ առաւել գիտել քան զվարդապետ:

Այն Յիսուս. Լաւն և մեծն ի գործոյն ճանաչի: